ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ, հեռ. 560 360
www.foi.am, foi@foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA, Tel: 560 360

194-ի 8
07.03.2013թ.

ՀՀ Ազգային անվտանգության
ծառայության տնօրեն
պարոն Գորիկ Հակոբյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Հակոբյան,

2013թ.-ի փետրվարի 11-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Ձեզ՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

«2011 թվականի հոկտեմբերի 18-ին Սանկտ Պետերբուրգում ստորագրվել է «Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միության գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին» համաձայնագիրը, որը ստորագրել է նաեւ Հայաստանի հանրապետությունը:

1. Ո՞ր տեղեկությունների գաղտնիության աստիճանն է վերանայվել:
2. Ովքե՞ր կարող են դիմել գաղտնազերծված տեղեկությունները ստանալու համար:
3. Գաղտնազերծված տեղեկությունները ո՞ր մարմնից կարելի է ստանալ:
4. Խնդրում եմ տրամադրել 18.04.2011թ. ստորագրված «ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին» համաձայնագրի պատճեն»:

2012թ.-ի փետրվարի 21-ին ԱԱԾ-ից ստացվել է պատասխան գրություն, որում, սակայն, առկա չեն ԻԱԿ-ի հարցմամբ ներկայացված հարցադրումների պատասխանները:

Ուստի, ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել վերոնշյալ տեղեկությունները:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան